



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
«ՀԻՂՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ  
ՏՆՕՐԵՆ**

« 01 » \_\_\_\_\_ 03 \_\_\_\_\_ 2021թ.

№ 08/ԼԱ/ - 99

**Փետրվարի 22-28-ը դիտված հիդրոոդերևութաբանական  
պայմանները ՀՀ-ում**

Փետրվարի 24-25-ին առանձին շրջաններում դիտվել են տեղումներ: Տեղումների գումարային առավելագույն քանակը կազմել է Բագրատաշենում և Իջևանում՝ 2մմ, մնացած շրջաններում՝ 0,2-1,4մմ քանակությամբ: Փետրվարի 22-23-ին, 26-28-ին դիտվել է առանց տեղումների եղանակ:

Օդի օրական միջին ջերմաստիճանը փետրվարի 22-ին նորմայից ցարժր է եղել 1-3 աստիճանով, 23-25-ին՝ նորմայից բարձր՝ 1-4 (Լոռիում, Տավուշում, Սյունիքում նորմայից ցարժր՝ 2-6), 26-ին՝ նորմայի սահմաններում (Տավուշում, Լոռիում, Սյունիքում նորմայից ցարժր՝ 1-2 աստիճանով), 27- 28-ին՝ բարձր 1-3 աստիճանով:

Ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է փետրվարի 28-ին և Սյունիքի հովիտներում գրանցվել է +17...+19°C, Արարատյան դաշտում, Տավուշում՝ +11...+14°C (Բագրատաշենում՝ +16°C), Լոռիում, Կոտայքի, Արագածոտնի, Վայոց Ձորի և Սյունիքի նախալեռներում՝ +6...+11°C (Արենիում՝ +14°C, Աշտարակում և Օձունում՝ +12°C), Կոտայքի, Արագածոտնի և Վայոց Ձորի լեռներում, Շիրակում, Գեղարքունիքում՝ +1...+6 (Աշոցքում՝ -2°C, Սեմյոնովկայում՝ 0°C, Գյումրիում՝ +8°C) աստիճան տաքություն:

Ամենացածր ջերմաստիճանը դիտվել է փետրվարի 22-ին և Շիրակում, Լոռիում, Գեղարքունիքում, Կոտայքի, Արագածոտնի և Վայոց Ձորի լեռներում գրանցվել է -12...-17°C (Աշոցքում՝ -28°C, Տաշիրում՝ -21°C, Գավառում՝ -20°C, Ստեփանավանում՝ -19°C, Մարիկում, Ապարանում և Ծաղկահովտում՝ -18°C, Ֆանտանում՝ -9°C), Սյունիքում, Վայոց Ձորի, Կոտայքի և Արագածոտնի նախալեռներում՝ -5...-10°C (Սիսիանում՝ -17°C, Թալինում՝ -11°C), Տավուշում, Արարատյան դաշտում՝ -3...-6°C (Դիլիջանում՝ -12°C):

Փետրվարի 23-24-ին Բագրատաշենում, Ապարան լճայինում, Պուշկինի լճ. -ում դիտվել է քանու ուժգնացում, պոռթկումները մինչև 15-19 մ/վրկ:

Մարտի 1-ի դրությամբ ձյան ծածկը կազմում է Արագած բարձր լեռնայինում 128սմ, Որոտանի լճ. -ում՝ 81սմ, Ամբերդում՝ 55սմ, Ջերմուկում՝ 46սմ, Անանունի և Պուշկինի լճ. -ում՝ 39սմ, Հրազդանում, Ամասիայում, Աշոցքում՝ 30-35սմ, Ապարան լճայինում,

Սեմյոնովկայում՝ 26սմ, Ճամբարակում, Սևանում, Ստեփանավանում՝ 16-18սմ, Տաշիրում, Մասրիկում՝ 15սմ, Ապարանում՝ 11սմ, մնացած շրջաններում՝ 1-7սմ: Արարատյան դաշտում ձյան ծածկը բացակայում է:

Հանրապետության գետերը գտնվում են ձմեռային սակավաջուր փուլում:

Սևանա լճի մակարդակը շաբաթվա ընթացքում բարձրացել է 1սմ-ով և կազմել՝ 1900.55մ (28.02.21թ.), որն անցյալ տարվա նույն օրվա մակարդակից բարձր է 11 սմ-ով:

Հարգանքով՝

Տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար

Լ.Ազիզյան

Տնօրենի տեղակալ Գագիկ Սուրենյան  
Հեռ.՝ 012 31 79 29